ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 10, 18.12.2025թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 17.12.2025թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-40/02L**)՝ 2026 թվականի հունվարի 05-ից Բանկի Ռիսկերի կառավարման վարչության պետ Սերոբ Վարդանյանին նշանակել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության անդամի պաշտոնում:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102-40/02L
Դաս: ԾԳ
«17» դեկտեմբերի 2025թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՍԵՐՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի գ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետի գ) ենթակետը, քննարկելով Ռիսկերի կառավարման վարչության պետ Սերոբ Վարդանյանին Վարչության անդամի պաշտոնում նշանակելու մասին Բանկի Խորհրդի նախագահ Գ.Հովհաննիսյանի առաջարկը՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2026 թվականի հունվարի 05-ից Բանկի Ռիսկերի կառավարման վարչության պետ Սերոբ Վարդանյանին նշանակել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության անդամի պաշտոնում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գործադիր տնօրեն Մ.Անանյանին հանձնարարել ապահովել Սերոբ Վարդանյանի ՀՀ Կենտրոնական բանկում սահմանված կարգով Վարչության անդամի պաշտոնում գրանցվելու գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՕԱՕ • 02500518